№ 20 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 28

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 28 № 20

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գնացէք ընտրութիւններին

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Մտորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար Մարգարիտ, Յովհաննէս և Բրիստափոր Աւիետեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին առաջինը իր տեքսորդի, վերջինները իրանց թանկագին հօրեղբօրորդի

Ստեփան Կարապետեան Աւիետեանցի

մահը։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, յունվարի 28 ին, առաւօտեան ժամը 10-ին իր սեփական տնից (Բաղիեղդէնի փող. № 4. Վ.օրօնցօվի արՀանի մօտ) դէպի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին (Բէլական դպրոցի դիմաց)։

Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

(դ.) 1—1

Բացուած է բաժանորդագրութիւն

1907 թ.

„ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ“

ժողովրդական-հասարակական-տնտեսական

տարաբերի

«Նոր-Աշխատանքը» նուիրված է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրոլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։

«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։

«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան։

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրված գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին.	4 ր.	Տարին.	18 ֆր.
Կէս տարին. . . .	2 ր. 50 կ.	Կէս տարին. . . .	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.

1—3 ա. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑՆԵՐԻ

ԵՒ

ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ

պատրաստ հագուստների Պարիժակի խանութում,

որ գտնվում է Գօլովինսկի պրոսպեկտի վրա

առաջին ԳԻՄՆԱԶԻԱՅԻ հանդէպ,

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՔ

Յունվարի 22-ից ՄԻՆՉԵՒ փետրվարի 10-ը՝

Գները ֆաբրիկային են և կապոյտ մատիտով նշանակված։

ՀԵՌԱԽՕՍ № 258

(21, 25, 28, 4, 8) ա. 3—5

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Բազմամեայ ընկերութիւն, որ զբաղվում է կեանքի դժբախտ դէպքերի ապահովագրութեամբ

Եկամուտների եւ դրամագլուխների ապահովագրութեան

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնված 1835 թուին

Ընդունում է ապահովագրութիւններ ամենազանազան պայմանների և դրութիւնների, անշարժ գումարներից մինչև 200,000 ր. մի անձի վրա։ Ապահովագրողների մասնակցութիւն ընկերութեան գործերում և եկամուտներում, ապահովագրական վկայականների պայմանաժամի յարատեւութիւն։ Ապահովագրական գումարների վճարում, ինքնասպանութեան դէպքում։ Ճանապարհորդութիւնների անսահմանափակ իրաւունք։ Ապահովագրութեան դադարեցման, գրաւ դնելու և աւարտման ժամանակ ամենաշահաւէտ պայմաններ։

Պահեստի և այլ դրամագլուխներ 38,000,000 ռուբլու

Մանրամասն տեղեկութիւններ, ընկերութեան կանոնագրութիւնները և հաշիւները, ինչպէս և ընդունելութեան ցուցակները, յայտարարութիւնները և այլն, կարելի է ստանալ ձրի

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Тифлисъ. Барятинская ул., № 6, телефонъ № 415.

9—10 ա. (կ) Գլխաւոր ներկայացուցիչ՝ Բ. Գ. Կրասնեանսկի

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՄԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՄԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

ՀԵՌԱԽՕՍ № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. կը.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԲԻՆՅՈ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԲՆՈՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., մէջքաս. երկ., հինգշ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. ուրբ. և շաբ. 1—2 ժ., հինգշ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕՅՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՉԷՆ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՈՄԱԽՈՎԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։
Բժ. Ն. Ի. ԽԷՌՈՒՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։
Բժ. Զ. Ֆ. ՆՈՎՁՈՐՈՎ.—Առտի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԲՆՈՎՍԿԻ } կլինիքական ռնալիզ
Բժ. Դ. Իւ. ՕՆՕՇԿՈ.—Բժշկ. գիմն. մասսաժ, երեքաբ. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕՖԵՎԱ.—Մասսաժ. 11—4. ժ.
Ս. ԵԱ. ՊԱՒԼՈՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Դ, ԳՕՐԱՆԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՄԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. — 5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, սոնտուների և ծառների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 53—144

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, յունվարի 22-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

Ց. ԶԱՐԻՖԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

Առաջին անգամ հայոց բեմի վրա

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դրամա 5 արար., Հաուպտմանի թարգմ. Վ. Տիրացեանի

Մասնակցում են՝ տ. տ. Արաքս, Մայսուրեան, Յաստիկ, Վարդուհի, Օհանեան, պ. պ. Աբէլեան, Աղաբէգեան, Զարիֆեան, Մանուէլեան, և Յարութիւնեան,

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները բենեֆիսի են

Վարչութեան հերթապահ անդամ՝

Կ. Շիրինեան

Բեմիսսեր Ց. Աբէլեան

առ. 2—2

ՀԻՄԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆոն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ներքին հ. և էլեքտրօբուժութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։
Ի. Ե. ԱԽԵՏԻՄԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։
Գ. Ա. ԲԼՅՑԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։
Ի. Ե. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնոզով, կատարվումն միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համաներշուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

առ. Ե. Հ. կ. 17—100

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի եւ ականջի

հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի երկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլովսկի պրոսպ., տ. Ֆօրբերի № 11.

(Կ. Չ.) առ. 18—60

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՑ

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ իմ յայտարարութիւնները, որոնք գործադրվելու են յունվարի 28-ի ընտրութիւններին, մեկնաբանվում են, ինչպէս այդ հասաւ իմ ականջին—սխալ կերպով. հարկաւոր եմ համարում բացատրել, որ մասնաժողովի այն հերթապահ անդամը, որ ստուգում է մուտքի մօտ բիւլէտէնները, իրաւունք չունի տեսնել թէ ինչ է արդեօք գրված նրանց մէջ, այլ սոսկ բաւականանալու է արտաքին նայուածքով, այսինքն հաւատանում է, որ ներկայացվող թերթիկը ըստ ձևի յիրաւի բիւլէտէն է և որ նրա վրա դրոշված է Թիֆլիսի քաղաքային վարչութեան կնիքը։

Ընդ սմին յայտարարում եմ, որ բիւլէտէնների յիշատակած ստուգումը չէ սահմանափակում մասնաժողովի այն բոլոր գործողութիւնները, որոնք յիշատակված են թերթիկների միջոցով ընտրութիւնները կատարելու կարգի մասին տուած հրահանգագրի մէջ, որ հաստատված է ներքին գործերի մինիստրից 1906 թ. փետրվարի 24-ին, հանդերձ այն փոփոխութիւններով և յաւելումներով, որ հաստատված են ներքին գործերի մինիստրից 1906 թ. դեկտեմբերի 10 ին։ 1—1

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ալէքսանդրօ-Նեվսկի եկեղեցուն կից.

Միքայէլեան փող. № 139, տէլէֆոն № 817.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից։

Բժ. Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—Ներքին հիւանդութ. երեքշաբթի և հինգ. օրերը, ցեր. 11—12 ժամը։
Տ. Ի. ՐՈՒԲԻՆՅՈ—Ներքին հիւանդութ. շաբաթ օրերը 12—1 ժամը։
Ս. Ս. ՎԻՐՍԱԼԱՁԷ—Ներքին հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ։
ՕՐԲԵԼԻ—Զողային հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ օրերը, 12—1ժամը։
Ի. Ն. ՏՈՒՄԱՆՕՎ—Կանացի հիւանդութ. երեքշաբթի և ուրբաթ 11—12 ժամը։
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ—Վիրակապութեան հիւանդութ. երկուշաբթի և հինգշաբթի օրերը 11—12 ժ.։
Ս. Ա. ՐՕԶԱՆՕՎ.—Քթի, ականջի և բերանի հիւանդութիւններ, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11—12 ժ.։
Հիւանդանոցի կառավար. բժ. Ա. Ս. ԱԼԱԴՕՎ
Ներքին հիւանդութ. ամեն օր 10—11 ժամը։

(Կ.) առ. 9—10

ԴԵՐՁԱԿ

ԱՐՇԱԿ ՄԱԼԵԱՆՑ

Գանձվսկի № 5.

Պատիւ ունեմ յայտնելու յարգելի հասարակութեան, որ այս յունվարի 25-ից վերսին սկսել եմ իմ գործը և ընդունում եմ պատուէրներ. ստացել եմ անգլիական ամեն տեսակ կտորներ։

Ցարգանօք՝ Արշ. Մալեանց

ու. կ. առ. 2—2

ԿՕՇԻԿՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

(1901 թ. արժանացաւ մեդալի)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԻՐՆԵՐ թէ տղամարդկանց և թէ կանանց նուրբ տեսակի

ԿՕՇԻԿՆԵՐԻ

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ

Պատուէրները կատարվում են բարեխղճութեամբ և երաշխաւորութեամբ։ Վէլեամինօվսկայա փողոց, տ. Խոսրօեվի։

Դարչինեան

առ. (ա. օ.) 8—12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատուիրակների ցուցակը Դէպի ընտրական տուփերը Ընտրութիւնները Կովկասում. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Տուէք ձեր ձայները. Մամուլ. Գ. Ա. Օպոչինի, կեանքի շուրջը. Հետաքրքրական թուանշաններ. Մերոնք աւելի փորձված են. Նամակ Կաղզուանից. Պետական Դուման և մահմեդականները. Ի գիտութիւն հայ հասարակութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐԵՐ—ՑՈՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Թիֆլիսի առաջադէմ ընտրողները իրանց խորհրդակցական ժողովներում կազմել են պատուիրակների հետեւեալ ցուցակը.

Առաջին քաղաքամասում

1) Միխայիլ Նիկոլաեվիչ Վասիլիևը, բժ., քաղաք. դումայի ձայնաւոր, Կիրպիչնի փող. № 13.
2) Մէլխայիլ Դիմիտրիեվիչ Ելչուկով. գիմնազ. ինսպեկտոր, Արագիլնսկի փողոց, № 10.
3) Պետր Իվանովիչ Զաչինեաև, գիմնազ. ուսուցիչ, Կորգանովսկայա փողոց, № 9.
4) Միխայիլ Գրիգորիեվիչ Կոնիև, գիմնազ. ուսուցիչ. Սապեօրնայա փող., № 37.
5) Ալէքսանդր Եակովլեվիչ Մամինով, բժիշկ, Կորգանովսկայա փող., № 18.
6) Իպպոլիտ Իվանովիչ Գլամենեվսկի, գիմնազ. ուսուցիչ, Վօյենայա փող., № 3.
7) Արտէմ Ստեպանովիչ Փիրալեան, ագրոնոմ, քաղ. դումայի ձայնաւոր, Ուղլինի փող., սեփ. տուն.
8) Դավրիթ Բէժանովիչ Սակվարելիձէ, մասն. հաւատ., Արծրունիեվսկի փող., № 27.
9) Աբգար Մարկիանովիչ Ռօսինեանց, բժիշկ, Գօլովինսկ պրոսպ., № 39.

Երկրորդ քաղաքամասում

1) Դօլուխանեան Պավել Մարկովիչ, երդուեալ հաւատարմատար, Պասկեվիչի փող., սեփ. տուն.
2) Քալանթար Ալէքսանդր Հայրապետեան, խմբագիր, Գրիբօեդովսկայա, № 5.
3) Տուրկեվիչ Եւգենիյ Մարկովիչ, երդուեալ հաւատարմատար, Սուդէյնայա № 19.

Երրորդ քաղամասում

1) Կրասնեանսկի Բորիս Գրիգորեվիչ, հանքագործ, Բարեատինսկայա № 8.
2) Սեմէօնով Իլի Թէօդորովիչ, մանկավարժ.
3) Թումանով իշխան Գէորգի Միխայլովիչ, հրապարակախօս, Բարեատինսկայա № 8.

Չորրորդ քաղամասում

1) Ալիխանեան Կոնստ. Միք., իրաւաբան, Լերմօնտ., 21.
2) Վերմիշեան Գրիգ. Ամբակ., խմբագիր, Միքայէլեան փող. № 10.
3) Քալանթարեան Պետրոս Արտէմ., իրաւաբան, Վօրոնեէնսկի № 8.
4) Մգեբրով Լեվոն Եակովլ., նոտար, Երևանեան հրապար. № 2.
5) Մելիք-Աղաբեանց Ալէքսանդր. Սերգ., սեփ. տուն.
6) Օտտեն Ֆերդ. Կոզլովիչ. Սօլոլակսկի փող. № 8, դեղագործ.
7) Պսարով Իվան Եգորովիչ քանկի կառավ., Լաբարատ. սեփ. տուն.
8) Մատուրեան Սերգէյ Արտեմ., ուսուցիչ, Կօլօբովի փող., սեփ. տուն.
9) Շանպարոնեան Սամուէլ Պողոս. բժ., Բարիչևսկ փող.

Հինգերորդ քաղամասում

1) Գօնչիև Բժիշկ Կոնստանդին Ագաֆոնովիչ, Բեբուտովսկայա փող., սեփ. տուն.
2) Ռուբէն Աբգարովիչ Յովհաննիսեան, երդ հաւ. օգն., Բեբուտովսկայա փող. տուն Գօնչիևի,
3) Ստեփան Սերգէեվիչ Մալխասեանց, էկզարխի հրապ, տուն Բենկլեան.
4) Արտէմ Նիկիտիչ Սէյլանով, վաճառական, Սիօնի փող, սեփ. տուն.
5) Գէորգիյ Բօգդանովիչ Տէր-Աստուրով, դիբեկտոր Թիֆլ. Կրեդ. Ընկ., Պուշկինսկայա փող. սեփ. տուն։
6) Իշխան Վասիլիյ Միխայլովիչ Թումանով, «Нов. Обозр.» նախկին խմբագիր, Բարեատինսկայա փող. սեփ. տուն.
7) Ներսէս Զախարեվիչ Ումիկով, բժիշ., Գանձվսկայա փող. տուն Թումանովի.
8) Եգոր Իվանովիչ Շաշինով, ապահովագր. ընկ. գործակալ, Սերգէեվսկայա փող. տուն Միրզոևի։

Եօթներորդ քաղամասում

1) Հասան Զալալեան Զուլֆուգ բէգ, կախարինսկայա, սեփական տուն.
2) Նախշունեան Գրիգոր Աստուածատրեան, երկրորդ գիլդի վաճառական, Բօգովայա հրապարակ. սեփ. տուն.
3) Մելիք-Այվազեան Աղասի Առաքելեան, Կուբինսկայա, սեփ. տ.
4) Փօրակով Դաւիդ Իլլարիոնովիչ, 2-րդ գիլդի վաճառական, Մետեխի փող. սեփ. տ.
5) Փօրակով Սիմեոն Իլլարիոնովիչ, 2-րդ գիլդի վաճառական, Մետեխի փ. սեփ. տ.
6) Խալաթեան Նիկոլայ Դաւիթովիչ, վաճառական, Էտտինգայա, սեփ. տ.
7) Կվեզրելի-Կօպաձէ Իվան Նիկոլաեվիչ, 2-րդ գիլդի վաճ., Կախետինսկ., սեփ. տ.
8) Կվեզրելի-Կօպաձէ Գէորգի Նիկոլաեվիչ, 2-րդ գիլդի վաճ., Կախետինսկ., սեփ. տ.
9) Բարսեղեան Սեդրակ Արութիւնովիչ, տեխնիկ, Ցիցիանովսկայա, սեփ. տ.
10) Աշուղաբեան Ստեփան Արտեմիեվիչ, Մետեխի փող. № 20.
11) Տէրտէրեան Սեդրակ Տէյմուրազովիչ, Կախետինսկայա սեփ. տուն։
12) Տէր-Դաւթեան Գէորգի Զախարովիչ, պաշտօնեայ կրեդիտի ընկերութեան մէջ, Լազարեվսկայա սեփ. տուն.
13) Մայսուրաձէ Եվստաֆի Սօլոմօնովիչ, վաճառական, Կապաերովսկայա սեփ. տուն.
14) Ղազարեան Միխայիլ Եգօրովիչ, հաշուապահ, Սուրբ-Նշանի փող., սեփ. տուն։
15) Եղիազարեան Իվան Նիկիտիչ, բժիշկ, Վելիամինօվսկայա, № 6.

Իններորդ քաղամասում

1) Կոնստանդին Իվանովիչ Գզելիևի, բժիշկ Ելիզավետինսկ. փող., № 7.
2) Մօիսէյ Նիկիտովիչ Մովսիսեան, բժիշկ, Ելիզավետինսկ. փող., № 21.
3) Վասիլիյ Գուրիեվիչ Պաւլով, քարոզիչ բաբտիստ., Բէհուտովսկ. փող., № 20.
4) Իրակլիյ Եվստաֆիեվիչ Պուրցելաձէ, ագենտ քաղաք. վարչ., Ելիզավետ. փող., № 43.
5) Ալէքսէյ Սէմեոնովիչ Սէմիգալով, ապատ նկարիչ, Բէհուտովսկ. փող., № 35.
6) Իվան Ֆելիկսովիչ Թխարժեվսկի, մասն. հաւատ., Նիկոլաեվսկ. փող. 45.
7) Վասիլիյ Ալէքսանդրովիչ Սուլխանով, կնոջել Թիֆլ. ազն. հող. բանկ. Բէհուտովսկ. փող., № 8.
8) Եղիշէ Իվանովիչ Թաւարբէգիան, մանկավարժ, Միխայլովսկ. փող., № 8.
9) Մկրտիչ Արուտիւնովիչ Տէր-Մարգարեան, վաճառական, Ելիզավետինսկ., № 66.
10) Իլիա Իվանովիչ Ցինամզդարով, նոտար, Ելիզավետինսկ. № 74.
11) Լևոն Լևոնովիչ Իշխ. Զերքեզով. ծառայող Թիֆ. ազն. հող. բանկի, Ալէքսէեվսկ. փող., № 6, սեփ. տուն.
12) Իվան Արտեմիեվիչ Շահբազեան, ագրոնոմ, Ելիզավետինսկ. փող., № 49, սեփ. տուն։

Տասներորդ քաղամասում

1) Բրիգելդ Լէօպոլդ Պետրովիչ, արխիտեկտ., Կիրօչնի փող. № 14.
2) Վուլֆ Նիկոլայ Կասպարովիչ ապահովագր. ընկերութ. տեսուչ, Միքայէլեան փող. № 172.
3) Դարսօեվ Իվան Գերասիմովիչ ինժ.-տեխնոլոգ, Կանեիեվսկայա փող. № 5.
4) Զօնիկով Պավել Մարկէեվիչ, տանտէր Գրիբոյեդովի փող. № 7։
5) Մակարով Կոնստանդին Դիմիտրիեվիչ, տանտէր, Մօլօկանսկի փող. № 6։
6) Մուխարինսկիյ Սաուլ Աբրամովիչ. ինժեն. Վոլգայի փող. № 6։
7) Օստրոգորսկիյ Նիկոլայ Նիկոլաեվիչ, քաղաքային խորհրդի ձայնաւոր, Նիկոլայեվսկի փող. սեփ. տուն.
8) Փիրումով Սերգէյ Պավլովիչ, տեխնիկ, Միքայէլեան փող. № 117։
9) Սամօդուրով Իվան Պանֆիլովիչ, հանքագործ, Աբաստումանակի փող Սօսնին գործարան։
10) Թամամշիվ Գեօրգիյ Իվանովիչ բժիշկ, Միքայէլ. փող. № 97։
11) Ֆ. Ֆէլով Տիտ. Ալէքսէեվիչ քաղաքային դումայի ձայնաւոր, Աւճարեան փող. № 77։
12) Էմինով Դաւիթ Իվանովիչ. բնագիտ. գիտութիւնների կանդիդ. Միքայէլեան փող. № 142 3—3

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» Բագուի բաժանորդները փետրվարի մէկից լրագրի համարները կը ստանան պ. Թադէոս Բուլեաթեանի միջոցով։

ԴԷՊԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏՈՒՓԵՐԸ

I

Այսօր Թիֆլիսում նշանակված է պատուիրակների քուէարկութիւնը։

Քաղաքը բաժանված է տասը ընտրական շրջանի՝ հավասարասխան տասը քաղաքամասերի։

Իւրաքանչիւր քաղաքացի, որ ունի ընտրողական իրաւունք, պէտք է տանէ իր քուէն և գցէ ընտրական տուփի մէջ։

Իրը քուէն մի թերթիկ է, որի վրա պէտք է գրված լինեն այն անձերի անունները, որոնց ցանկութիւն ունի ընտրողը առաջարկելու իբրև պատուիրակների։ Այդ թերթիկը պէտք է կրէ իր վրա քաղաքային վարչութեան կնիքը։

Եթէ այսօր կարելի չը լինի սկսել հաշուել քուէները և որոշել այս ու այն թեկնածուի համար տրված ձայների թիւը, այն ժամանակ այդ գործողութիւնը կը կատարվի վաղը։

Պատուիրակներին ընտրելուց յետոյ կը մնայ վերջին գործողութիւնը, այն է պատուիրակները ժողովվելով միասին կընտրեն Պետական Դումայի համար մի պատգամաւոր Թիֆլիսից։ Այդ ընտրութիւնը կը կատարվի մի շաբաթից յետոյ, փետրվարի 6-ին։

II

Մենք մի յորդոր ունենք կարդալու ընտրողներին։

Գնացէք ընտրութիւններին և իրականացրէք ձեր իրաւունքը։

Դա ձեզնից շատ ժամանակ չի խլի, իսկ կօժանդակէ կարևոր գործին։

Անտարբեր մի եղէք, մի ծուլածէք, գնացէք ընտրութիւններին։

Դուք լաւ գիտցէք, որ իւրաքանչիւր ձայն նշանակութիւն ունի և շատ անգամ մի կամ մի քանի ձայներից է կախված այս և այն թեկնածուի աջողութիւնը։

Տալով ձեր քուէն, եղէք գիտակցական և նպաստեցէք այնպիսի պատուիրակների ընտրվելուն, որոնք ընդունակ լինէին ապագայում կանգ առնել արժանաւոր պատգամաւորի վրա։

Անկասկած՝ ցաւալի և անախորժ մի հանգամանք է, որ առաջուց չէ պարզված պատգամաւորի անձնաւորութիւնը, որովհետև այն ժամանակ ընտրութիւնը աւելի կը մօտենար անմիջական քուէարկութեան։ Բայց քանի որ դա անկարելի է եղել որոշել, պէտք է ընտրել այնպիսի պատուիրակների, որոնք կարողանային իրանց կողմից ընտրել պատգամաւոր։

III

Մեր համակրութիւնները այն պատուիրակների կողմն են, որոնք կազմված են հայ-ռամկավար և ժողովրդական ա-

զատության միացեալ կուսակցության և ուրիշ գործոնների կողմից, որոնք հանդես են եկել առաջադիմ կամ պրոգրեսիստ անունով։

Ընտրական գործի շուրջ հիւսված պաշտօնական սահմանափակումները թոյլ չեն տուել, որ կուսակցությունները գործեն աւելի բացայայտ և հաստատակ կերպով։

Միւս կողմից հասարակությունը ազատ չէ իր կամքի արտայայտության մէջ ընտրիչ քաղաքական կազմակերպությունների բռնադատումների և ազդեցությունների։

Ճնշված է ընտրական պայքարը։

Սակայն, եթէ ընտրողները մի փոքր նեղությունն յանձն առած լինէին աւելի լուրջ և գիտակցօրէն վերաբերվելու իրանց գործին, նրանք կարող կը լինէին մաքառել անպատատ ոյժերի դէմ և արտայայտել իրանց կամքը։

Բայց որքան է ներկայումս այդ գիտակցությունը։

Ա. Բալանթար

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Երէկ, շաբաթ, յունվարի 27-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի գաւառի կալուածատէրերի ժողովը, պատուիրակներ ընտրելու համար։ Ընտրվեցին իշխ. Գ. Թումանեանն (Կազեա) և Նախուցրիշվիլի (սոց.-դեմօկրատ)։

Առաջադէմ ընտրողների մի խումբ ընտրողներին ուղարկել է հետեւեալ կոչը. «Քաղաքացի ընտրողներ! Այսօր, յունվարի 28-ին կայանալու է Թիֆլիսի կողմից ընտրվող անդամների ընտրությունը։ Ցիշեցնէք, որ ձեր դիտակցական ջանքերից է կախված երկրի բախտը։ Զը կարծէք թէ միայն ձեր ձայնը փոքր բան է. այդպիսի մանակի ձայներից է կազմվում հասարակական կարծիքը, և իւրաքանչիւր ոք, ով խուսափում է իր ընտրական ձայնից, հէնց դրանով նպաստում է ռեակցիայի աջողությանն, և, ուրեմն, հանդիսանում է նրա ակամայ դաշնակիցը։ Ուստի ընտրությունների օրը դուք բոլորդ պէտք է լարէք ձեր բոլոր ջանքերը, որպէսզի հնարաւորությունն տաք առաջադէմ կուսակցություններին՝ կոչնել ձեր ազատ կամքի վրա։ Մենք լիայոյս ենք, որ դուք ձեզ չէք արատաւորի, կշտամբանք ստանալով թէ հանդիստ սրտով էք վերաբերվել դէպի պետական նշանակալից գործը»։

Բոլոր կուսակցությունները, որոնք ինքնուրոյն ասպարէզ են եկել ընտրություններին, դիմել են իրանց ընտրողներին կոչերով, որոնցից քաղաքում ցրում են հազարաւոր օրինակներ։

Թիֆլիսի արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդը ուշադրություն առնելով, որ միությունների մէջ կան զանազան կուսակցությունների պատկանող անձինք, մեծ օրերս որոշել է իւրաքանչիւր արհեստակցական միութեան կողմից չը դնել առանձին թեկնածուներ Պետական Դումայի պատուիրակության համար, այլ իր ձայները տալ այն կուսակցությունների թեկնածուներին, որոնք պաշտպանում են բանւորների շահերը։

Թիֆլիսի հայրենասիրական ընկերությունը դիմել է քաղաքային վարչությանը և խնդրել, իր անդամներին իրաւունք տալ յունվարի 28-ի ընտրություններին մասնակցել կարգը պահպանելով 1, 7, 8, 9 և 10-րդ քաղաքամասերում և տալ նրանց որոշած նշանները։

Վճռված է ընտրողական ժամանակների նախագահ նշանակել այնպիսի անձանց, որոնք պատուիրակներ չեն և որոնք ոչ մի կուսակցության չեն պատկանում։

Բազում տեղեր են ունեցել մի շարք խուզարկություններ, որոնք, ի միջի այլոց, վերաբերում են և ժողովրդական ազատության կուսակցության կողմից պատուիրակության համար ընտրված թեկնածուներին։

Ժողովրդական ազատության կուսակցությունը, «հոդ և ազատություն» և սոցիալ-դեմօկրատական կուսակցությունները հրատարակել են իրանց թեկնածուների անունացուցակները։ Սոցիալ-դեմօկրատիայի կոչը կպցրած է քաղաքի պատերին։

Թէլաւի գաւառում շինական ժողովների թաղամասերի կողմից ընտրված լիազօրների համագումարին պատուիրակներ ընտրվել են. 1) Ար. Գրիգ. Մեղրէլիշվիլի, Ցնոնատա գիւղի բնակիչ, և 2) Նիկոլայ Գէօրգ. Բարդզիմաշվիլի։

Թիօնէթի գաւառում լիազօրների կողմից պատուիրակ է ընտրվել Միխ. Մազվ. Հէրնիաուրի, Թիօնէթի գաւառի Հէրնիաուրի գիւղի բնակիչ, որը պարապում է հողագործությամբ և կրթությունը ստացել է Թէլաւի քաղաքային երեքդասեան դպրոցում։ Թէլաւում խոշոր հողատէրերի ժողովին ընտրվել են 20 լիազօրներ, որոնց թւում կան ինչպէս սոցիալ-դեմօկրատներ, այնպէս և սոցիալ-ֆեդէրալիստներ։ Ի միջի այլոց, ընտրվել է Պետերբուրգում ապրող յայտնի փաստաբան Լուարսաբ Անդրօնիկովը։

Նամակ Օլթիից

Մեր ժողովուրդը ընդհանրապէս հաւատը կորցրել է դէպի ամեն մի ընտրություն։ Վերջին ժամանակներս այնքան ընտրություններ կատարվեցին ու վերջը փուչ դուրս եկան, որ ժողովուրդը ոչ միայն վերին աստիճանի անտարբեր ու սառնասիրտ է վերաբերվում դէպի ամեն մի ժողով, այլ և ժողովում իր ներկայ նիւ շաւղով գնում են ժողովրդի յոյսերը արդարացնելու Դումայում։

Տուէք ձեր ձայները այդպիսիներին։

Լ. Դանիէլեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պետերբուրգում, ծայրայեղ ձախակողմանների կազմած վերջին ընտրողական ժողովում եղել են մի քանի դէպքեր, ուր իրանք սոցիալ-դեմօկրատները խիստ կերպով բողոքել են այն ինսինուացիաների դէմ, որպիսիները անում են նրանց ընկերները ժողովրդական ազատության կուսակցության հասցէին։

Պետերբուրգի նահանգական ընտրողական ժամանաժողովը դեռ շարունակում է ընտրողական ցուցակներից հանել բանւոր ընտրողների անունները—ոչ միայն ոստիկանության, այլ և մանաւոր անձանց պահանջների համաձայն։

ՄԱՄՈՒԼ

Պետական Դումայի ընտրությունները դարձեալ մերկացնում են մեր առաջ հասարակական կեանքի ցաւագար ու անմիթար երեւոյթներից մէկը, որ ժողովրդի առաջադիմության ամենազլխաւոր խոչընդոտն է հանդիսանում։ Այդ երեւոյթը հասարակության անտարբերությունն է, որ հնարաւորություն է տալիս զանազան մութ ու վնասակար տարրերին լայն ասպարէզ գտնել իրանց շահագործության համար և իր սաղմի մէջ թաղել ժողովրդական ամեն մի օգտակար հարց, ամեն մի կուլտուրական գործ։ Հասարակության այդ անտարբերությունը ամենից աւելի ակներև ու որոշ կերպով երեւան է գալիս ներկայ ընտրությունների ժամանակ, երբ ընտրողների մի խոշոր թիւ ինքնակամ կերպով հրաժարվում է կատարել իր քաղաքացիական պարտականությունը, առանց հասկանալու, որ դրանով ինքնասպանության փորձ է անում իր դէմ, որ խուսափելով ընտրողական ձայնի իրաւունքից, քուէից, ոճրագործություն է գործում վրանգելով իր նոյնիսկ մի ձայնով ժողովրդի ազատագրության գործը։ Ընդգծելով ընտրողների այդ անտարբերությունն ու անպարտաճանաչությունը, «Русь» լրագիրը ենթարկում է նրանց անխնայ քննադատության։

Քաղաքական ներկայ լարված վայրկեանում, երբ Պետական Դումայի ընտրություններից է կախված Ռուսաստանի ապագան, երբ քաղաքական կուսակցությունները կառաղաբար բանակռիւ են վարում համաձայնությունների մասին, հաշի առնելով, համարեա թէ, ամեն մի ընտրողական ձայն, ակամայից ապշում ես ընտրությունների մէջ այդքան քիչ թւով մասնակցող ընտրողներ տեսնելով։ Եթէ առաջին ընտրությունների ժամանակ ընտրողների անտարբերությունը բացատրվում էր մասսաների քաղաքական անպատրաստականությամբ, որոնց համար ընտրությունները նոր և նոյնիսկ անհասկանալի մի գործ էր, այդ դէպքում երկրորդ ընտրությունների ժամանակ այդ հանգամանքը, Դումայի 72 օրվայ գոյությունից յետոյ, բաւականաչափ վերացած պէտք է համարել։ Մինչդեռ բաւական է եթէ համառօտ հայեացք ձգելու լինենք ներկայումս սկսած ընտրողների պայքարի պատուիրակների ընտրությունների պատերի վրա։

Ռիբինսկում, մանր հողատէրերի ժողովում 860 ընտրողներից ներկայ են եղել միայն 39 հոգի։ Զերկասսկի գաւառում (Կիեվի նահանգ) 4237 հոգուց ներկայ են եղել 132. Բեռգանի նահանգի Բեռգանի, Միխայլովսկի և Սիպոժկովսկի գաւառների մանր հողատէրերի ժողովում 2679 հոգուց ներկայ են եղել 172. Պետրօվսկի նահանգի մանր հողային սեփականատէրերի ժողովում 2657-ից եղել են 823-ը։ Նոյնպիսի տեղեկությունները ստացվում են և այլ տեղերից։

Կարելի է, միթէ, ընտրողների այդպիսի վերաբերմունքից յետոյ համարել ընտրությունները նորմալ, եթէ դրա վրա աւելացնելու լինենք և այն, որ շատ յաճախ 190-150 ընտրողներ ընտրում են 15-20 պատուիրակներ. այսինքն, իւրաքանչիւր 5 հոգին ընտրում են մէկին։ Ի հարկէ, զարմանալի չէ և այն, եթէ 70 ընտրողներ իրանց միջից ընտրում են 30 պատուիրակներ, որոնք համարեա թէ բոլորը քահանաներ են լինում։

Թող ամեն մի ընտրող յիշէ, որ ընտրությունները մանակցելը իր ամենաոչնչակարգ քաղաքացիական պարտականությունն է, որոնց չը կատարելը յանցանք է։ Ամեն մի ընտրողական ձայն ահագին նշանակություն ունի Ռուսաստանի ճակատագիրը վճռելու համար։ Շատ դէպքերում նոյնիսկ ընտրողական մի ձայնը կարող է յաղթություն տալ ընդդիմադիր կուսակցություններին ընդդէմ ռեակցիոնների։ Ընտրողական իրաւունքից խուսափելը յանցանք է։

*

Դեռ ևս յունվարի սկզբներում, երբ լուրեր էին տարածվել, որ կառավարությունը մտադիր է նոր փոխառություն անել, պաշտօնական շրջանները այդ լուրերը համարում էին հնարովի և դիտաւորեալ, ռուսական վարկը ձգելու նպատակով արված։ Այդ օրից շատ ժամանակ չէ անցել, բայց այսօր կառավարությունը ինքն է արդէն մայլ գոյներով նկարագրում մեր ֆինանսական դրությունը, աշխատելով ապացուցանել, որ անհրաժեշտ է ներքին փոխառություն անել, որ միմիայն ժողովրդի մատակարարության համար այս առաջին երեք ամսվայ ընթացքում պահանջվում է 61 միլիոն բուբլի։ «Բեպեն» լրագիրը խորհրդանշությունն առնելով փոխառության հարցը, ֆինանսների մինիստրության տուած հաշիւների վրա հիմնվելով, ապացուցանում է, որ կառավարությունը 1907 թւի առաջին երեք ամսվայ ընթացքում իր ոստամադրության տակ կունենայ 86 միլիոն բուբլի, որ լիովին կարող է ծածկել արտակարգ ծախքերը։ Այդ բոլորից յետոյ թերթը հարց է տալիս. «հարկաւոր է արդեօք ներքին փոխառությունը», և պատասխանում.

Եթէ նոյնիսկ մի բոպէ ենթադրելու լինենք, որ մատակարարության կարիքը անկարելի է լրացնել այն միջոցներով, որ կը ստացվեն առաջին երեք ամսվայ ընթացքում, այդ դէպքում անգամ անյապաղ փոխառություն անելու հարկ չը կայ և ցանկալի էլ չէ։

Նախ և առաջ այդ փոխառությունը կը լինէր ապօրէնս։ Դժուար չէ այդ ապացուցանել։ Բայց և այնպէս թող այդ հարցը կասկածելի համարվի։ Նոյնիսկ այդ դէպքում հասկանալի չէ թէ ինչու անհրաժեշտ է կասկածելի փոխառություն կատարել Դումայի գումարումից առաջ, երբ այդ Դուման մի ամսից յետոյ արդէն հաւաքված կը լինի և արտակարգ կերպով նոյնիսկ նախահաշիւը քննելուց առաջ կարելի է ներկայացնել նրա հայեցողությունը մատակարարության կամ այլ անհրաժեշտ կարիքների համար փոխառություն անելու նախագիծ։ Բայց կրկնում ենք, մատակարարության կարիքի ծախքերը հոգալու համար փոխառության պահանջ չը կայ և 1907 թ. առաջին երեք ամսվայ ընթացքում չի էլ լինի... եթէ, հասկանալի է, ուզիղ է, որ 1906 թւի նախահաշիւից մնացել է 61 միլիոն բուբլի։ Փոխառության գաղափարը թեւարկված է նրանով, որ կառավարությունը ցանկանում է կարելւոյն չափ աւելի անկախ դալ իրան ժողովրդական ներկայացուցիչներից թէկուզ հէնց սկզբներում. այդ նպատակով աշխատում էին արտասահմանում աւելի խոշոր փոխառություն կնքել, իսկ երբ այդ չաջողվեց, պէտք է բաւականանալ 5, միլիոն բուբլով, որպիսի գումարը, երևի, դարձեալ կը վերգվեն խնայողական գանձարաններից...

Պ. Ա. ՕՍՕՂԻՆԻՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Երէկ, յունվարի 27-ին, առաւօտեան ժամի 10-ին երդուեալ հաւատարմատար Պ. Ա. Օսօղինինի մարմինը դուրս բերին իր սեփական տնից, որ գտնվում է Գուդովիչի փողոցում, և Օսօլակի փողոցով բերին Երևանեան հրապարակը, որտեղ կատարվեց առաջին հոգեհանդիսաը. ապա այնտեղից Դվորցովայա փողոցով, որտեղ Արծրունու շինության առաջ, վրաց ազնուականության թատրոնի հանդէպ տեղի ունեցաւ երկրորդ հոգեհանդիսաը։ Հանդատեան թափորը մեծ բարձրությամբ առաջ գնաց Գօլովինսկի պրոսպեկտի վրայով դէպի Վերա։ Արբատիցական շինության առաջ, թատրոնի պատշգամբից դիմաւորեց թաղման թափորին դրամատիքական դերասանական և երաժշտական խումբը թաղման օրհներգով։ Այդտեղ ևս կատարվեց հոգեհանդիսաս, որից յետոյ երաժշտական նուագով թափորը առաջ գնաց և Արքունական թատրոնի առջև ընդառաջ դուրս եկան օգնական դերասանների խումբը իրանց նուագախմբով։ Այդտեղ ևս հոգեհանդստան կարգ կատարելուց յետոյ թափորը գնաց դէպի Վերա. ճանապարհին եղբում էր Փոխարքայի շքախումբը։ Մարմինը տարան Վերայի ռուսաց եկեղեցին, ուր պատարագից յետոյ, նոյն եկեղեցու բակում կատարվեց հանդիսաւոր թաղումը։ Թաղմանը ներկայ էին ազնուականության, քաղաքային և այլ հաստատությունների, նոյնպէս և փաստաբանների կօրպորացիայի և մամուլի ներկայացուցիչները։ Պակներ դրված էին 30-ից աւելի. երդուեալ հաւատարմատարների խմբի, արտիստիքական և արքունական թատրոնների ու խմբերի կողմից, «Кавказъ» և «Тифл. Лист.» թերթերի կողմից և այլն։

ԿԵԱՆՔԻ ՇՈՒՐՋԸ

II

Աշակողմեան և կենտրոնական կուսակցությունները եռանդուն կերպով կազմակերպվում են, լարում են իրանց ոյժերը և գումարում համագումարներ, որտեղ քննում են իրանց գործելակերպի հարցերը։

Օրվայ ահ ու սարսափը, գտրնանը սպասվող ահաբեկիչ հողային շարժումների նախազուշակումը,—այդ բոլորը ինտիկտաբար հարկադրում է հասարակության յետադիմական տարրերին և նիւթապէս ազատով դասակարգերին ձուլվել և կազմել սերտ խմբեր, մեծացած երկիւղի անասնական զգացմունքով գալիք ճակատագրական անյայտի առաջ...

Կարևոր է սակայն նկատել, որ ամբողջությունն և պարզ որոշված ծրագիրներ չունեն առհասարակ այդ կուսակցությունները, մանաւանդ աշակողմեանը։

Սարսափի մի ընդհանուր ինտիկա ունեն աշակողմեանները։ Կայ և մի ընդհանուր հոսանք, ձգտումն դէպի հին, փորձած ըէժիմը. բայց թէ՞ինչպէս պաշտպանել նրան կուռում, որ մղում են նոր ոյժերը, որոնց զեկավարում է հայրենիքը նորոգելու, կեանքը նոր հիմքերի վրա դնելու գաղափարը։

Թէ՞նչ ուղիով, թէ՞նչ ձևերով, թէ՞նչ միջոցներով վերադարձնել կրկին իր սկզբնական դրությունը, որի մէջ նա գտնվում էր մինչև յունուարյան հոկտեմբերի 17-ը. նրանք չը գիտեն, նրանք շուարվում, գլուխները կորցնում են։ Նրանց ծրագիրները, նրանց գործելակերպը, նրանց ճառերը իրար են խառնվում, շփոթվում ընդհանուր անորոշությունից։ Սկըսվում են սուգ ու շուանը, յուսահատական աղաղակները։

Ողորմելիները չը գնահատեցին այն հսկայական ուղին, որով անցաւ Ռուսաստանը մի տարվայ ընթացքում, չը նկատեցին, որ շատ է արված, և այն, իսկ որ էր, չի վերադառնայ, իսկ այն ինչ որ նուաճված է, կը կազմէ նոր թարմ կեանքի հիմքը։ Զը գիտանալու են գնում, որ տեղի է ունեցել մի այնպիսի բան, որ մի ակնթարթում փշրում է դարաւոր աւանդը, որ միանգամից յեղաշրջում է ժողովրդի ներքին աշխարհը, որ խորխորատ է բացվել նրա մէջ, ինչ որ էր, և նրա մէջ՝ ինչ որ պիտի լինի։

Ի՞նչ արած։

Զէ՞ որ աշակողմեան կուսակցությունները կազմված են նոյն բիւրօկրատ-արկածախնդիրներից, արկածանդիրներ, որոնք և եղել են տարբերի ընթացքում բազմամիլիոն ժողովրդի վիճակի տօրինողները։

Մի կողմ թողնելով կենտրօնի կուսակցությունները, որոնց մէջ և «հոկտեմբերի 17-ի միությունը», որի շարքերում կան միջին հայեցքների տէր մարդկանց յայտնի համախմբություն և մի որոշ համոզմունք, հիմնված այն բանի վրա, որ մանիֆեստը «կարական կերպով» ցանկապատ է դրել զինուորա-դաշտային դատարաններից զուրկ անցեալի և նրանցով հպարտացող ներկայի մէջ, որ անհրաժեշտ է զեկավարվել մանիֆեստով՝ որի հիման վրա կարելի է ստեղծել... զինուորա-դաշտային դատարանների ազատություն, որ կառավարությունը ուշացնում է նախագծված «ազատություններ» իրականացումը, կառավարություն, որին, սակայն, նրանք պատրաստ են փոխադարձաբար ամեն աշակցություն ցոյց տալ «վրաժօլան» արտատպիլ անելու նրա բոլոր ծրագիրներում, չը քաշվելով նոյնիսկ արդարացնելու զինուորա-դաշտային դատարանների անհրաժեշտությունը—փաստեր հաւանալու զզուելի քաղաքականության՝ մենք այժմ մեր ուշադրությունը դարձնենք ծայրայեղ աշակողմեան կուսակցությունների վրա, որոնց համարեա թէ միակ հաւատարիմ օրգանը մնում է «Моск. Вѣд.»-ն միայն, աչքի առաջ չունենալով, ի հարկէ, բոլորովին ստոր և մարդատեաց ծրագրով թուրքիները և կոչերը, լցված «յեղափոխական» ինտելիգենցիային և օտարազգիներին կոտորելու լիրք աղաղակներով։ Ըստ «Моск. Вѣд.»-ի էլ կարող էք դատել, թէ որքան երերուն է աջակողմեան կուսակցությունների անցեալի փտած հիմքերի վրա յենվող դիրքը։

Մարդիկ միմեանց հասկանալ չեն կարողանում, ներդաշնակությունը բացակայում է և նրանք զբաղված են միայն նրանով, որ զգուելի վայնասուն են բարձրացնում, որ յանդիմանում են միմեանց, որ մէկը միւսի պաշտպանությանն է դիմում։ Այդ արդէն մամի և զգացմունքի միանգամայն խառնիճաղանճ դրության ապաւորություն է թողնում։

--Հարկաւոր չէ հոկտեմբերի 17-ը։ Ոչնչայնենք նրան։ Բայց թ՞ինչպէս։ Պէտք է գործել եռանդով, միացեալ ոյժերով, կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առաջ, պէտք չէ խարությունել դնել միջոցների մէջ։ Բայց թ՞ինչպէս։

Կրուշեվանը հարաւից դիմում է Պլինսկին, Պլինսկն հաղորդում Գրինդմուտին, վերջինս խորհրդակցում է Սուվորինի հետ և ահա գործակալը՝ տիրահռչակ Դուբրովինը հարաւում։

Ահա պոգրոմների ուրուականը...

Եւ չը կայ սխսեմ, չը կայ աջողություն։ Ի՞նչպէս կուել։ Եւ երևան է գալիս կատարեալ քաոս, կատարեալ անօրություն։

Մի երբի գալու, բացի պոգրոմներից, ի հարկէ, հնարաւորություն չը կայ։ Իսկ հարուածները տեղում են աւելի յաճախ ու յաճախ։

Եւ գալիս է գարունը։

Փախչի՞լ։

Այո, փախչել...

Այդ հետևանքը զգացվում է. նրա մասին չէ խօսվում, բայց նա զգացվում է։

Ահա նրանք, որոնց վրա յենվում է յետադիմական բիւրօկրատիան, «սահմանադրական» կառավարությունը...

Սրանք են, որոնց աղաղակներին շարունակ լսում է նա, որոնց հետ միացել և ամողջ կռիւ է յայտարարել ազատարար շարժման։

Անողոք կռիւ։

Ռէակցիան արտայայտեց իր ամբողջ ոյժը, գործադրեց ամեն տեսակ միջոցներ, ինչ որ «կարելի» էր։ Նոր միջոցների ճանապարհ չը կայ այլ ևս։

Աշակողմեանները ևս չը փրկեցին նրան անկումից։

Եւ հասկանալի է։ Այն դրությունը, որի մէջ գտնվում էր յետադիմական կառավարությունը, ժամանակաւոր էր. նա չէր կարող երկարատև լինել, որովհետև իւրաքանչիւր կառավարության դրությունն կախված է հասարակությունից, և նա կը զարգացնէ իր ոյժերը այն դէպքում, երբ նա ժողովրդին կը զեկավարէ անկեղծությամբ, կը զարգացնէ և առաջ կը մղէ նրա ոյժերը յօգուտ պետության։

Բայց երբ նա կուում է այդ ժողովրդի հետ, այն ժամանակ նա կը գործադրէ ամենազօրը այն ոյժը, որը ունի իր տրամադրության տակ և վերջ ի վերջոյ ստիպված կը լինի տալու իսկական ոյժին...

Ար-Թոն

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԹԻՒՆԵՐՆԵՐ

II

Պ. Թոթոմեանցի երկրորդ յօդուածը, ինչպէս ասել էինք անցեալ անգամ, քննում է այն հարցը, թէ որպիսի գումարներ է ծախսում պետական գանձարանը գաղտնի ու յայտնի ոստիկանության և ժանդարմերիայի համար։ Հասկանալի է, որ քաղաքային վարչությունների կողմից տրված մի քանի տասնեակ կամ հարիւր միլիոններով անհնարին է պահել ոստիկանական այն անթիւ ու անհամար շտատը, որպիսին պահում է մեր բիւրօկրատական կառավարությունը շատ աւելի, ի հարկէ, իր սեփական գոյությունը ապահովելու համար, քան քաղաքացիների պաշտպանության համար, ինչպէս որ ինքը՝ կառավարությունն է ուզում հաւատացնել միշտ։ Քաղաքային վարչությունների կողմից տրված հարիւր հազարներն ու միլիոնները, պետական գանձարանից այդ առարկայի համար բաց թողնված գումարների բազդատությամբ, ինչպէս կը տեսնենք այս բօպէիս ստորև, շատ աննշան մասն են կազմում։

«Ներքին գործերի մինիստրի բիւջէը 1897 թւականին,—ասում է պ. Թոթոմեանցը—78,502,825 բուբլի էր։ Հինգ տարվայ ընթացքում՝ 1897—1901 թ. այդ բիւջէը 87,660,199 բուբլու հասաւ, այսինքն 9 միլիոն բուբլիով աւելացաւ։ Ներքին գործերի մինիստրի ծախսերը 1902—1906 թւականներին շատ աւելի խոշոր գումարների են հասնում, այն է՝ 1902 թւականին 93,187,205 բուբլի, 1903 թ.—99,792,633 բուբլի, 1904 թ.—144,727,078 բուբ., 1905 թ.—106,692,697 բուբլի, 1906 թ.—131,223,849 բուբլի։

«Այստեղից երևում է, որ վերջին հինգ տարվայ ընթացքում ներքին գործերի մինիստրության հիմարկությունները պահելու տարեկան ծախսը հասել է 131 միլիոն բուբլու, այսինքն աւելացել է 44 միլիոնով։ Նամանաւանդ աչքի է ընկնում 1906 թւականը, երբ սմէտան յանկարծ 25 միլիոն բուբլիով աւելացաւ։

«Թէ ներքին գործերի մինիստրության որ հիմարկությունների են տարեկան այդպիսի նշանաւոր գումարներ կլանում, այդ կարելի է տեսնել արված ծախսերի հետևեալ բաժանումից, վեց տարվայ ընթացքում, այն է՝ 1901—1906 թւականներին։ Ոստիկանական վարչության, ուրեադնիկների ու տարժնիկների, զեմսկի նաչալնիկների ու գաղտնի ծախսերի համար 1901 թւականին ծախսվել է 31,861,000 բուբլի, 1902 թւականին նոյն բաների համար ծախսվել է 33,110,000 բուբլի, 1903 թ.—36,518,000 բուբլի, 1904 թ.—40,724,000 բուբլի, 1905 թ.—40,726,000 և, վերջապէս, 1906 թ. ոստիկանական վարչության, ուրեադնիկների, տարժնիկների և այլոց համար ծախսված է 62,802,000 բուբլի, Ներքին գործերի մինիստրության կենտրոնական, նահանգական և այլ հիմնարկութիւնների պահպանության համար վեց տարվայ ընթացքում (1901—1906 թ. թ.) ծախսվել է տարեկան՝ 55,799,000 բուբլի, 60,077,000 բուբլի, 61,274,000 բ., 74,003,000 բուբլի, 65,966,000 բուբլի, 68,427,000 բ.։

«Այս մեր բերած թւ. նշանները ապացուցանում են, որ ներքին գործերի մինիստրության գործունէությունը գլխաւորաբար ուղղված է ոստիկանական օրգանները ընդարձակելու կողմը։ Վեց տարվայ ընթացքում ոստիկանական վարչության ծախսերը աւելացել են 10 միլիոնով, ուրեադնիկների ու ըստարժնիկների վրա եղած ծախսերը 5 միլիոնից բարձրացել են մինչև 21 և կէս միլիոնի։ Զեմսկի նաչալնիկները հիմա տարեկան 10 միլիոնից աւելի են կլանում։ Իր գաղտնի ֆոնդերը ներքին գործերի մինիստրությունը տարեկան 2 միլիոնից հասցրեց մինչև 3 և կէս միլիոն բուբլու։ Ընդհանուր առմամբ գանձարան տեսակի ոստիկանության և զեմսկի նաչալնիկների համար եղած ծախսերը վեց տարվայ ընթացքում 32 միլիոնից աւելացել են մինչև 63 միլիոն բուբլի։

«Այսպիսով, ոստիկանության վրա ծախսված գումարը ներկայումս 1 և կէս անգամ աւելի է, քան լուսաւորության մինիստրի բիւջէյը, որ սա անում է իր բոլոր գիտական հիմարկութիւններն ու ուսումնարանները պահպանելու համար։

«Վերոգրեալ գումարի մէջ դեռ չեն մտնում «ժանդարմների առանձին կօրպուսի» վրա ծախսված գումարները, որ մտնում են զինուորական մինիստրության սմէտայի մէջ։ Պետական նախահաշիւի մէջ ժանդարմների կօրպուսը 1899 թւականից դէսը միայն մի անգամ յոդված է կազմում։ Ժանդարմերիայի վրա ծախսված գումարները հետևեալ ձևով են աճում. 1899 թւականին—3,658,620 բուբլի, 1900 թ.—3 696,887 բուբլի, 1901 թւականին—3,960,489 բուբլի, 1902 թ.—4,943,378 բ., 1903 թ.—5,191 066 բ., 1904 թ.—5,271,188 բ., 1905 թ.—5,552,718 բուբլի, 1906 թ.—5,545,751 բուբլի։

«8 տարվայ ընթացքում ժանդարմների շէջը կարողացել է իր կօրպուսի համար եղած ծախսերը աւելացնել համարեա թէ 2 միլիոն բուբլիով և հասցնել գումարը մինչև 5 և կէս միլիոն բուբլու տարեկան»։

«Ահա թէ ինչպիսի արագությամբ են աճում,—շարունակում է պ. Թոթոմեանցը,—պետական ժանդարմերիայի ծախսերը ոստիկանության և ժանդարմերիայի համար։ Սա դա զարմանալի չէ. միմիայն Պետերբուրգում, օրինակի համար, շատ աւելի մեծ քանակությամբ ոստիկաններ ու ժանդարմներ կան, քան իր բնակչությամբ երեք անգամ դերազանց Պարիզում։ Վերջինում ընդամենը 2,500 ոստիկաններ և 1,200 քաղաքապետական տարժնիկներ կան։

«Եթէ ժողովրդային լուսաւորության համար եղած ծախսերն էլ,—այսպէս է վերջացնում իր հետաքրքրական յօդուածը պ. Թոթոմեանցը,—այդպիսի արագությամբ աճէին, այն ժամանակ Ռուսաստանը իր ժողովրդի զրագիտության կողմից վերջին տեղը չէր բռնի»։

Բայց ամենից մազալուն ու տարօրինակն էլ հէնց այն է, որ իր ամբողջ ուշադրությունն ոստիկանության ու ժանդարմերիայի ոստիկանության թիւը տարէց տարի բազմացնելու կողմը դարձնող և պետական ֆինանսների ամենամեծ պատասխանատուության կոկորդը նեղող բիւրօկրատիան է, որ ամենից աւելի է զանգատվում ժողովրդի տգիտության ու խաւարամտության վրա, իր յամառությունն ժողովրդին անհրաժեշտ ազատություններ չը տալը բացատրելով նրանով, թէ՝ նախ պէտք է ժողովուրդը լուսաւորել և ապա նրան ազատություններ տալ։ Օհ, ի հարկէ, շատ հիանալի կերպով կը լուսաւորին ժողովրդին ոստիկան ու ժանդարմ վարժապետները. միթէ սև հարիւրակիրները հէնց դրանց «լուսաւորած» աշակերտները չեն...

Կատիլինա

ՄԵՐՈՆՔ ԱՒԵԼԻ ՓՈՐՁՎԱԾ ԵՆ

Հրապարակախօս պ. Ա. Սաօլիպինը, երևի, հետաքրքրական է իսկական ռուս մարդկանց» հանձարի վրա, մի առանձին հիացմունքով «Нов. Вр.» թերթում պատմում է, թէ ինչպէս կամ ինչ եղանակով են նրանց ազնիւները միամիտ գիւղացիներին իրանց՝ «իսկական ռուս մարդկանց» կուսակցության մէջ առնում և անդամ դրում։

«Խաղաղ և բարեսիրտ գիւղացուն, ասում է պ. Ա. Սաօլիպինը,—հարցնում են.

—Դու հաւատում ես Աստծուն։

—Հաւատում եմ։

—Թագաւորին սիրում ես։

—Սիրում եմ։

—Հիմա շատ չար մարդիկ են դուրս եկել, բունտեր են անում, սպանում են, մեղքեր տարածում մեր երկրում։ Անդամ գրվիր, եղբայր, այնպիսի մարդկանց ընկերությանը, որոնք այդ բոլոր բաներին հակառակ են։

—Իսկ դուք ինչ էք անում այդ ընկերության մէջ, հարցնում է բարեսիրտ գիւղացին։

—Այ, մենք բոլորս կը միանանք և, երբ կուզենան թագաւորի դէմ գնալ, մեր կուրծքերով կը պաշտպանենք նրան»։

Ինչպէս տեսնում էք, պրօպագանդիստի աշխատանքը վերին աստիճանի թեթեւացված է և պրօպագանդայի ձևն էլ վերջին ծայր պարզությունն է հասցված։ Եւ միթէ այդ պարզությունը չէ յիշեցնում մեր ազգային կուսակցությունների կողմից ընդունված ու տարածերով գործադրված պրօպագանդայի եղանակը։ Այստեղ, ի հարկէ, հարց ու պատասխանի նլութը այլ էր լինում, բայց ձևն ու պարզությունը ճիշտ նոյնն էր, ինչ որ է այսօր «իսկական ռուս մարդկանց» ընդունածը։

—Դու ցանկանում ես, որ Հայաստանն ազատվի, հարցնում էին մեր գիւղացիներին կամ հնչակեան պրօպագանդիստները։

—Ցանկանում եմ, պատասխանում էր գիւղացին։

—Ուզում ես, որ թուրքերին ու քիւրդերին քշենք մեր Հայաստանից։

—Հրամեցէք, ազա, ուզում եմ։

—Բաս դու մեր կուսակցության անդամն ես, վճռում էր պրօպագանդիստը և իր դաֆթարի մէջ գրում գիւղացու անունը։

Ցանուն արդարութեան, սակայն, այս հաստատութիւնը անելով հանդերձ, պարտաւոր ենք ասելու, որ այդ նամանութիւնը շատ հիշա չէ. «ռուս մարդկանց» պրօպագանդիստները, օրինակի համար, երբէք մարդկի ու բանութեան չեն դիմում իրանց անդամների թիւը շատացնելու համար, այնինչ, ինչպէս արդէն յայտնի է ամենքին, մեր «տղերքը» յաճախ իսկի վերոգրեալ հարցումներն էլ չէին տալիս գիւղացիներին, այլ պարզապէս երկրաչափական ձևով գծում էին ամբողջ գիւղի կամ նոյնիսկ գաւառի սահմանները և հրամայողական եղանակով յայտարարում էին գիւղացիներին, թէ նրանք այսուհետև «դաշնակցականներ» կամ «հնչակեաններ» են։

Բացի դրանից, «իսկական ռուս մարդիկ», վստահանալով իրանց ցուցակագրած «անդամների» կրեդոյին, թոյլ են տալիս սրանց՝ իրանց միջից պատգամաւորներ ընտրել Պետական Դումայի համար, որի հետևանքը առաջին Պետական Դումայի օրով, գոնէ, այն եղաւ, որ այդ՝ «իսկական ռուս» համարված պատգամաւորներից շատ շատերը, չնչին բացառութեամբ, այնտեղ տեսնելով թէ բանն ինչումն է, «դաւանանցին» իրանց ցուցակագրողներին և միացան ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնների հետ։

Այդ նոյն բանը, ի հարկէ, չեն կարող անել մեր ազգային կուսակցութիւնների գիւղացի «անդամները», որովհետև ազա-շէֆերը թոյլ չեն տալիս սրանց պատգամաւորներ ընտրել իրանց միջից, այլ թեկնածուներին ուղարկում են «վերևից» և հրամայում են անպատճառ զրանց ընտրել։ Այս եղանակով, անշուշտ, «դաւանութիւնների» առաջն անվում է և կուսակցական «դիսցիպլինան» էլ չէ խախտվում երբէք։

Զարմանալի է, թէ ինչու մեր «պարբիտները» մի քանի գործնական ցուցմունքներ չեն անում ռուս «պարբիտներին». այն ժամանակ, երևի, հրապարակաւոր Սօցիալիզմի հիացմունքին չափ ու սահման չէր լինի։

Ռ.

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

Յունվարի 20-ին

Տեղիս կուսակցութիւնները՝ միմեանց հետևելով՝ դաւանանում են ընտրողական սկզբունքի դէմ։ Ընտրութեան օրից 10 օր առաջ «Դումայի համար պատուիրակներ ընտրելու տոմսերը բաժանելցին ժողովրդին, ուստի ամեն մի կուսակցութիւն իր կողմից ոչ միայն պատուիրում էր տոմսեր բաժանող ոստիկանին իր թեկնածուին յիշեցնել, այլ և որոշված մարդիկ գնալով տոմս ստացողների մօտ և բարոյական ճնշում գործ դնելով՝ համոզում էին իրանց թեկնածուի անունը գրել։ Թէկուզ այդ ձևը լուսաւոր երկիրներում ընդունված էլ լինի, գէթ մեզանում աննրերի է, ուր անոչչա ճնշում բնաբարվում է անհատական, կամքը, որովհետև մենք դեռ հետևողութեան շրջանումն ենք և հաստատուն կամք չունենք։ Դաշնակցութիւնը մի այնպիսի ուժի է թեկնածու նշանակել, որ ոչ կրթութիւն ունի և ոչ էլ հասարակական գործերում շանս... այնպէս որ եթէ այդ միջոցն էլ չը դիմէին, անշուշտ կը սեանային նոյն իսկ թուրքերի դէմ։ Իրանցից էլ խոտանվածներ կան, որ նշանակալոցից արժանաւորը չունեն, իսկ այդ արդէն կուսակցութեան անկումն է ցոյց տալիս։

Մամուլը միշտ բողոքում է, որ այս կամ այն չարիքը արմատախիլ չէ լինում ժողովրդի մէջ. չէ լինում, որովհետև իրանց «ինտելիգենտ» համարողներն անգամ ուժ են տալիս այդ չարիքներին, քան թէ կռւում նրանց դէմ. թէև գործերով այդպէս են, սակայն միշտ ճառում, պոռոտախօսում են ընդհակառակը և խոսում անտրամ միամիտներու։ 25 տարի կը լինի, մաքուր ու անկեղծ անձնք՝ ի թիւս այլ չարիքների՝ կռւում են նաև աղջիկ նշանադրելու համար «գլխարկի» (բաշլըղ) առնելու սովորութեան դէմ. բայց դեռ շարունակվում է երբեմն տգէտ և ագահ ծնողների մէջ։ Մօտ օրերումս կատարվից այդպիսի մի տգեղ երևոյթ. մի ունեոր ընտանիք, մի՝ իրեն «ինտելիգենտ» կամ, ինչպէս ժողովրդին է ասում», «շլեապով քրդի» միջոցով 150 ր. գլխարկի առաւ և նոր համաձայնեց իր աղջկայ ձեռքը տալ՝ հակառակ վերջինիս ցանկութեան՝ մի պատանու, չար օրինակ դառնալով ուրիշներին։ Ամօթ, հազար ամօթ այդպիսիներին... Մինչեւ ե՞րբ պիտի շարունակվեն այդ հնացած, անմիտ ու տգեղ սովորութիւնները, որոնց շնորհիւ շատ ընտանիքների կեանքը դժոխք են դառել։

Մ. Ղազարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԸ

Պետական Դումայի պատուիրակների ընտրութեան շատ փիչ ժամանակ է մնացել։ 4 օրից կը կատարվեն պատուիրակների ընտրութիւնները, որոնք նոյն նշանակութիւնն ունեն, ինչ պատգամաւորների ընտրութիւնները։ Պետական Դումա գնացող պատգամաւորների ովքեր լինելը կախված է հենց այդ պատուիրակներից։ Անկասկած է որ մեր քաղաքի նման մի մահմեդական մեծ քաղաքի պատգամաւորը պէտք է լինի մահմեդական։ Ուրիշ կերպ չէ կարող լինել։ Բայց մահմեդականների մէջ չէ նկատվում անցեալ տարվայ հետաքրքրութիւնը ու իրարանցումը։ Այդպէս են մահմեդականները ամեն տեղ. ոչ իրանց անձնական ակնկալութիւնը չը կայ, մնում են լուռ ու անշարժ և ասում են. «Ինձ ինչ»։

Անցեալ տարի շատերը ցանկանում էին գնալ Պետական Դումա։ Դրանց համար էլ յուզմունքն ու շարժումը այնքան մեծ էր, որ նոյնիսկ մի ամիս առաջ ամենքը խոսում էին Դումայի և ընտրելի պատգամաւորի մասին։ Իսկ այս տարի միանգամայն ընդհակառակը...

Անցեալ տարի չէին հետաքրքրվում, թէ ընտրված պատգամաւորները ինչ յատկութիւններ պէտք է ունենան, ժողովրդի որ դարդին դարման պէտք է անեն, որ կարիքներին բաւականութիւն պէտք է տան, և այդ դարդերի դարման ումից պէտք է խնդրել, ումը պէտք է օգնութեան կանչել։

Մահմեդականների մէջ պատգամաւորութեան համար մատնանշվում են Աղա Իսմայիլ Թաղիեվը, զօտ. Կարաբէդ Կարաբէգովը և Քարբալայ Իսրաքիլ Հաջիեվը։

Այդ յարգելի պարոններից և ոչ մէկը լրագրերի միջոցով կամ ժողովներում չէ բացատրել թէ ինչ է իր ծրագիրը, իր համոզմունքը, ինչ պէտք է անեն ապագայում երբ գնան Պետական Դումա։

Մահմեդական հասարակութիւնը գիտէ միայն այն, որ Քարբալայ Իսրաքիլ Հաջիեվը և Աղա Իսմայիլ Թաղիեվը հարուստ են, իսկ Կարաբէգովը զօտոր է, պրծաւ։ Ինչ է գլուանց համոզմունքը, ինչ աչքով են նայում դրանք Պետական Դումայի վրա, աջակողմեան թէ ձախակողմեան կուսակցութեան են պատկանում, թէ անկուսակցական են, առաջադիմական. մի խօսքով նրանց մասին ոչինչ յայտնի չէ...

Մեր կարծիքով անհրաժեշտ է, որ այդ անձինք քաղաքակ յայտնեն իրանց նպատակները, պարզեն իրանց դաւանանքը։ Դեռ ևս ուշ չէ։ Նրանցից իւրաքանչիւրը հասարակութեան կարող է բացատրել թէ ինչպէս է ըմբռնում պատգամաւորի կոչումը և ինչպէս պէտք է կատարէ այն։ Դա նրանց պարտականութիւնն է, որպէս զի յետոյ թէ հասարակութիւնը և թէ իրանք յուսախաբ չը լինեն։

Արդեօք սրանք էլ մեր անցեալ տարվայ պատգամաւորների նման պիտի բաւականանան ամեն բանի սուաղ աչք փակելով և «գըլխս վրա» ասելով՝ ինչ որ հրամայում են։

Ահա ինչու համար հարկաւոր է, որ այդ թեկնածուները ժողովի կամ լրագրի միջոցով դուրս գան և իրանց ծրագիրը պարզեն և ժողովուրդը ինքը տեսնելով և ըմբռնելով թէ որ ծրագիրը աւելի օգտակար է հասարակութեան, որի վրա կարելի է յոյս դնել, նրան էլ կը տայ իր ձայնը...

Պետական Դումայի պատգամաւորութեան հարցը այնպիսի մի մեծ և կարևոր հարց է, որ այդպիսի գործերում թայֆայականութիւնը, «խաթր» պահելը յանցանք է...

(«Իրշադ») Բոդուեցի

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Շուշի, յունվարի 15-ին

Շուշու Նպաստամատոյց Ցանձնաժողովը բաշխելով իր տրամադրութեան ներքոյ գրված բոլոր գրամները Շուշու, Խաչէնի, Վարանդայի ու Տիգակ-Զէբրայիլի կարօտեալներին և տեսնելով, որ այլ ևս ոչ մի տեղից նուէրներ չեն ստացվում յօգուտ ազգեանների, սոյն յունվարի 1-ից հարկադրված էր դադարեցնելու բոլոր գրամական միանուագ և ամսական նպաստները, պահելով ապրիլի շրջանառութեան մի տարի առաջ յատկացված 7000 ռուբլի գումարը նոյն գործի մէջ՝ հացի գինը գէթ քաղաքում արժան պահելու նպատակով։

Անցեալ տարվայ հոկտեմբերի վերջին, երբ Ցանձնաժողովը, միջոցներից զուրկ լինելով, արդէն ստիպված էր որոշումն անել սոյն յունվարի 1-ից իր գործունէութիւնը դադարեցնելու և ապրիլի գործի շարունակութիւնը միմիայն այդ գործի համար իր կողմից ընտրված մանձաժողովի վրա թողնելու, յանկարծ ստացվցին Բաղուից պ. Բողդան Դոլուխանեանից 41 վագոն ցորնեղ երկաթուղու բեռնագրեր, որի հետ և պ. Դոլուխանեանի խնդիրն այդ ցորենը Ելիսաւետ ընդունելու, փոխադրութեան մասին հոգալու և ամբողջ ցորենի ուղիղ կէսը Ցանգեզուր տեղափոխելու, իսկ մնացորդը Խաչէնի, Վարանդայի և Տիգակ-Զէբրայիլի ժողովրդին մասամբ արժանացրած գներով վաճառելու և մասամբ փոխարինաբար ստացողներով բաժանելու։

Ցանձնաժողովս իր սէր առատով լուծելով անմիջապէս ընդունեց այդ առաջարկը, նամանաւանդ որ պ. Դոլուխանեանը յիշատակել չէր, թէ Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը պիտի հոգար ցորենի փոխադրութեան ծախքը մինչեւ Շուշի և Գորիս։ Դժբաղդաբար Ցանձնաժողովս Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովից բաղմապատիկ դրութիւններից և հեռագիրներից յետոյ ստացաւ միմիայն մի հազար ռուբլի, դրվից անելանելի դրութեան մէջ. հարկադրված էր իր անդամների ստորագրութեամբ մուրհակներով և մեծամեծ դրժու

ցութեան գործադիր կոմիտէին, որ կրում է սոցիալիստիքական բնոյթ, և բանւորական կուսակցութեան ներկայացուցիչների յարաբերութիւններին պարլամենտում։ Սոցիալիստ պատգամաւորները վճռական ջանք են գործադրել՝ ստիպել կուսակցութեան և նրա պատգամաւորներին ընդունել ագրեսսիւ սոցիալիզմի տաքտիկան։ Պատգամաւոր Ամկինսօնը առաջարկել է ուղղումն մտցնել կուսակցութեան կանոնադրութեան մէջ, որի մէջ ասվէր, որ կուսակցութեան վերջնական նպատակ հանդիսանում է արտադրութեան գոյութիւն ունեցող կապիտալիստական սիստեմի տապալումը և հասարակական սեփականութեան սիստեմ հաստատելը և պարլամենտում սեփական, միւսներից անկախ մի կուսակցութիւն ստեղծելը՝ յիշատակած նպատակի կուսակցութեան համար։ Ամկինսօնի ուղղումը պաշտպանում են պատգամաւորներից մի քանիսը, սակայն սոցիալիզմի թշնամի անդամները բողոքում են։ Խօսքը տրվում է բանւորական անկախ կուսակցութեան պարագլուխ Դէյլ-Հարդիին։ Ժողովը հետաքրքրվում է, թէ ինչպէս կը դուրս գայ նա իր դժուարին դրութիւնից։ Կէյր-Հարդին սկսում է, յայտնելով, որ նա անձնականապէս համակրում է Ամկինսօնի ուղղման մէջ եղած գաղափարին, բայց աւելացնում է հետևեալը.

«Համագումար եկած պատգամաւորները հանդիսանում են ժողովրդի ներկայացուցիչները, ժողովրդի, որ կանգնած է նրանց ետևում, և մինչև որ նա սոցիալիստ չը դառնայ լուրջ տաքտիկան սխալ կը լինի համագումարի կողմից՝ աշխատել սոցիալիզմը փաթաթել անպատրաստ ժողովրդի վրա։ Կը գայ ժամանակ, երբ բանւորները կը տեսնեն, որ սոցիալիզմը նոյն չափով կարևոր է նրանց համար, ինչպէս կարևոր է տրէտ-իւնիոնիզմը։ Սակայն այդ ժամանակը դեռ չէ հասել։ մի անէք այնպիսի քայլ, որ եղերերգական սխալի պատճառ դառնայ»։

ԳԵՐՄԱՆԻԱ

Իր ծննդեան օրվայ մօտերը Վիլհելմ կայսրը դիմել է պրուսական մինիստրների խորհրդի նախագահին և արդարադատութեան մինիստրին մի բէկրիպտով, որի մէջ յայտնում է, որ նորին մեծութեան կամ թագաւորող տան անդամներից որևէ մէկին վիրաւորելու դէպքում պատասխանատուութեան պէտք է ենթարկել այնպիսի անձնց, որոնք այդ յանցանքը գործում են լիովին նախամտածված և չար դիտաւորութեամբ, և ոչ թէ անպիսիներին, որոնք այդ յանցանքը գործում են թեթևամտութեամբ, չը մտածելով կամ թէ առանց վատ մտադրութեան։

ՖՐԱՆՍԻԱ

Ուսուցչական միութիւններից մի քանիսի վճիռը՝ միանալ բանւոր կազմակերպութիւնների հետ և պահանջել իրանց համար այն արտօնութիւնները, որոնցով օգտվում են բանւոր սինդիկատները օրէնքով, մեծ աղմուկ են բարձրացրել թէ մամուլում և թէ քաղաքական շրջաններում։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բրիանը յայտնում է, որ ուսուցչական միութիւնների՝ պրոլետարական—սոցիալիստական կազմակերպութիւններին միանալը անթոյլատրելի է, և կարող է ուսուցիչների արձակման պատճառը լինել։ Դեռ առաջ նա հրամայել էր Ռենայի վարչութեան ուսուցիչներին—դուրս գալ տեղական բանւորական ֆեդերացիայի կազմից և առհասարակ արգելել էր ուսուցչական միութիւններին միանալ աշխատանքի բորսաների հետ։ Այդ առիթով պետական պաշտօնեաների միացեալ շաները պաշտպանող Լիոնի կոմիտէատը բողոքել է ուսուցիչներին իր մօրալ և դրամական աջակցութիւնը։ Մամուլը, բացառութեամբ սոցիալիստական օրգանների, վճռականապէս անցնում է կառավարութեան կողմը։ Զափաւոր արմատական Siècle «Արդարացի ամրութիւն» յօդուածում գովում է Բրիանին և ասում է, որ մինիստրը պէտք է ամեն տեսակ մրջոցներ ձեռք առնէ՝ զսպելու «ուսուցիչների անհանգիստ փոքրամասնութեան»։ Արմատական - սոցիալիստական L'Aurore-ը գրում է.

«Մենք շատ ենք վախենում, որ Լիոնի ուսուցիչները խոշոր սխալ արին, աշխատանքի կոնֆերենցիայի (քաղաքական դաշնակցութիւն) հետ միանալով։ Ուսուցիչները, ինչպէս և մեացած քաղաքացիները, յանուն իրանց պահանջների ձեռք են բերել հասարակական կարծիքի աջակցութիւնը։ Սակայն նրանք չեն կարող չը հասկանալ, որ, մտնելով աշխատանքի գեներալ կոնֆեդերացիայի դաշնակցութեան մէջ, նրանք իրանց հեռու են վանում հասարակութեան մեծ մասին»։

Ինքնրտիրնքեան պարզ է, որ չափաւոր և պահպանողական մամուլը աւելի վճռականապէս է ասպարէզ գալիս ուսուցիչների դէմ։

Բէյնսպագի ընտրութիւնների ժամանակ դիրանական սոցիալիստների պարտութեան լուրը ուժեղ տպաւորութիւն է գործել ֆրանսիական սոցիալիստների վրա, որոնք բնաւ այդպիսի հեռանք չեն սպասել։ Սոցիալիստ պատգամաւոր Ռուանէն պալատի նրբանցքներում խօսակցութեան ժամանակ ասել է, որ այդ պարտութիւնը «ազատիչ դաս կը դառնայ այն սոցիալիստների համար, որոնք տեսնում են, որ մաքուր մերժման քաղաքականութեամբ ոչինչ չեն կարող անել և հեռուն չես կարող գնալ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 յունվարի

ՊԱՐԻԶ, 25 յունվարի։ Երէկ, կալօն պատգամաւորների պալատ մտցրեց եկամտային հարկի նախագիծը։ Բացատրիչ գրութեան մէջ մինիստրը ցոյց է տալիս, որ բոլոր ժողովուրդները կարգ ու կանոն մտցրին հարկերի իրանց սիստեմների մէջ՝ իսկական եկամուտը որոշելու համար։ Ինքը հրաժարվելով գերմանական և անգլիական սիստեմների ստրկական նմանողութիւնից, փնտրել է մի այնպիսի սիստեմ, որ համապատասխան լինէր Ֆրանսիայում գոյութիւն ունեցող աւանդութիւններին, բարքերին և հարստութիւնների բաժանմունքին։ Նոր օրինագծի համաձայն անշարժ և շարժական կայքերից ստացվող տուրքերը լինելու են 4 0/0, արդիւնաբերական և առևտրական հաստատութիւններից—3½%, աշխատանքից 3%։ բոլոր օտարազգի արժէթղթերը ազատ մուտք ունեն ֆրանսիական շուկան և պէտք չունեն մարկաների։ Եկամտային հարկից կը ստացվի ընդամենը 120 միլիոն։ Ադմինիստրատիվ մարմինները հսկելու են բանկերի և վարկային ընկերութիւնների գործերի վրա։ Կեղծիքների համար կը նշանակվեն խոշոր տուգանքներ։ Այս օրինագիծը յանձնվեց մասնաժողովին։

ՏՈԿԻՕ, 26 յունվարի։ Աշխնոյի հանքերի բանւորների յուզմունքները խոշոր և լուրջ անկարգութիւններ են ծնել։ Ասում են, որ պատճառը սոցիալիստներն են։ Ջերբակալված է սոցիալիստիքական լրագիրներից մէկի խմբագիրը։ Բանւորները հարբելով կողոպտել և ջարդել են պահեստները և ապա հրդեհել, որի ժամանակ այրվել են 15 հոգի։ Կարգը վերահաստատում են ոստիկանութիւնը և զօրքերը։ Տեղի են ունենում բազմաթիւ ձերբակալութիւններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Պետական խորհրդի համար պատուիրակներ են ընտրվել Լէվիտսկի, Բագալէյ և Բէյնդարդ պրոֆէսսորները—Խարկովի համալսարանի կողմից, ըէկտոր Պասսէկը—Իւրիէվի համալսարանի կողմից։ Մնացած երկու պատուիրակների ընտրութիւնները յետաձգված են։

ՊԷՆԶԱ, 26 յունվարի։ Քաղաքային թատրոնում ներկայացումը վերջանալուց յետոյ նահանգապետը հասարակութեան հետ դուրս եկաւ փողոց։ Ամբոխին շատ մերձ գտնվող տան դռնից խորամանկութեամբ դուրս վազեց մի երիտասարդ և նահանգապետի ետևի կողմից գնդակ արձակեց ուղղակի վզի վրա։ Նահանգապետը ընկաւ երեսնիվայր մայթի վրա։ Նահանգապետին ուղեկցող ոստիկանապետի օգնական Զարինը այդ պահուն, ամբոխից յետ մղվելով, գտնվում էր երկու քայլ հեռու։ Նա դուրս հանեց ատրճանակը և ուղղեց մարդասպանի վրա, սակայն նախ քան արձակելը, ինքը սպանվեց տեղնուտեղը սրտին ուղղված գնդակից։ Երկու դէպքերն էլ ընկած էին մայթի վրա։ Մարդասպանը փախաւ թատրօնի ներսը, ուր սկսվեց սարսափելի իրարանցում։ Թատրօնի դերասանուհը աշխատեց բռնել մարդասպանին, սակայն վերջինս կրակեց մէկ անգամ և փոխանակ վերատեսչին, սպանեց ոստիկան։ Վերատեսչին օգնութեան շտապեց թատրօնի բէժիսօրը, բայց սա էլ ծանր վիրաւորվեց։ Մարդասպանը մի ձեռքին ատրճանակը բռնած, մխում կասէտ (բութ ծայրով գործիք, որ գործ են ածում սպանելու համար), փախաւ կանանց սենեակը։ այնտեղ սպասաւորուհին նրան ցոյց է տուել վերնասենեակը տանող սանդուխը։ Մարդասպանը հեւալով շտապել է այնտեղ, իսկ սպասաւորուհին նրա ետևից փակել է վերնատան դռները, որպէսզի մարդասպանի ճանապարհը կտրէ։ Վերջինս կծկվելով պատին վառարանի մօտ, ինքնասպանութիւն է գործել։ Վրա հասած ոստիկանապետը նրան գտել է կեանքի թոյլ նշոյլներով։ Առաւօտեան ժամը 7-ին մարդասպանը հոգին աւանդեց։ Թէ ով է նա, առ այժմ յայտնի չէ։ Դնդակների ձայրերը կտրված էին և թունաւորված։ Գումարվում է քաղաքային դուռայի արտակարգ ժողով։

27 յունվարի

ՊԱՐԻԶ, 26 յունվարի։ Պատգամաւորների պալատի այսօրվայ նիստում սոցիալիստ Ռուանէն դիմեց ֆինանսների մինիստրին և հարցապնդեց այն միջոցների մասին, որ նախագծում է նա ֆինանսական գործիչների դէմ, որոնք դրդում են ֆրանսիական դրամական հասոյթը կալուղներին՝ ձեռք բերել օտարազգի արժէզոյութիւնները։ «Ռուսաց արժեթղթերի ընկնելը—ասաց Ռուանէն, պատճառ դարձաւ, որ զուգընթացաբար կորչին միլիարդ ֆրանկներ ֆրանսիացիներից։ Ապա Ռուանէն մեղադրում է Լիոնի վարկային ընկերութեանը այն բանում, որ նա ֆրանսիացիներին 269 մի լիոն ֆրանկ հասցրեց, գաղտնի կերպով Ֆրանսիայում տեղաւորեցնելով ռուսաց ազնուականութեան բանկի 874 միլիոնի պարտատերհակները։—«Ռուսաստանը,— նկատեց Ռուանէն,—արկածների բովից անցած ազատութիւնների երկիր է» (ազատակ, բողոքներ)։ Ֆինանսների մինիստրը յայտնում է, որ նա իր պատասխանը յետաձգում է մինչև այն մօմենտը, երբ նա վերստին առիթ կունենայ մատնանշել այն աշխատանքները, որոնցով կառավարութիւնը պաշտպանում է ֆրանսիացի մանր կապիտալիստների շահերը։ Ռուանէի խօսքերը մի երկրի հասցէին, որ դեռ չէ կատարել իր պարտականութիւնները, յամենայն դէպս չէն կարող Ռուսաստանին վերաբերվել (ծափահարութիւններ)։ Ռուանէն առարկում է, որ ռուսաց բուրլու արժէքը որոշվեց միայն այն օրից, երբ օտարազգի արժողութիւնների պօրտֆելը հարստացաւ 12 միլիարդ ռուսաց արժեթղթերով։ Ֆրանսիայում պահվող բոլոր օտարազգի արժեթղթերի ընդհանուր 30 միլիարդ գումարից։ Ապա Ռուանէն ասում է, որ ռուսաց վերջին փոխառութիւնը կնքելու ժամանակ ինչ որ 12 միլիոն գործակալական վարձատրութիւն ստացաւ։ Արտաքին գործերի մինիստր Պիշօնը հեղնաբար նկատում է, որ այդ պէտք է (հեռագրական բաց)... մտցնել արձանագրութեան մէջ (ծիծաղ)։ Ռուանէն շարունակում է, որ ռուս-եապոնական պատերազմի շրջանում ռուսաց արժեթղթերի սակագինը շարունակ արհեստական կերպով էր պահպանվում։ Բորսային մանիպուլարներ կատարվում էին սոսկ ռուսաց վերջին փոխառութիւնը կնքելու ժամանակ և նոյնիսկ երբ Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչը «մահացաւ»։ Պիշօնը ընդհատում է հեռաստորին, յայտնելով որ ներկայ դէպքում խօսք կարող է լինել միայն նոր կալի սպանութեան մասին, որ դատապարտվեց բոլոր երկրների հասարակական կարծիքից։ (Բուռն ծափահարութիւններ)։ Ռուանէն կը շտապում է կառավարութեան, բորսային մանիպուլարներ թոյլատրելու համար, որոնք երբեբեցրին ֆրանսիական բէնտայի կուրսը։ «ԵԹԷ—ասում է նա, գործը վերջանայ առանց ժեծադորտ միջնադէպի, ֆրանսիական կապիտալները կը վերադառնան Ֆրանսիա, սակայն յամենայն դէպս հանրապետութեան վտանգ է սպառնում։ Թող ֆինանսների մինիստրը անսէ Ռուսաստանի կցկտուր սուգ ու շվանին, որին ուզում են խեղդել կապիտալիստները։ (Ծայրայեղ ձախակողմեանների ատեաններում ծափահարութիւններ)։ Պիշօնը ենռանդով բողոքում է այն յայտարարութեան դէմ, թէ ռուսաց պետական փոխառութեան կարողութիւնը (?) և Ռուսաստանում տիրող առևտրի և արդիւնաբերութեան ընդհանուր դրութիւնը չեն կարող արդարացնել սոցիալիստների յարձակումները։

«Ես բախտաւոր եմ,—ասում է նա,—երբ տեսնում եմ, որ ռուս կառավարութիւնը դրամներ փոխ տուողների համար սովորական ապահովութեան աւելացնում է կրկին բոլորին յայտնի ահմանադրական երաշխաւորութիւններ։ Հանրապետութեան և Ռուսական Կայսրութեան կառավարութիւնները ցոյց են տալիս միմեանց փոխադարձ և մշտական աջակցութիւն արտաքին քաղաքականութեան մէջ։ Ֆրանսիական կառավարութիւնը դրականապէս վճռել է՞ շարունակել իր աշխատանքները հրամայված է ֆինանսների մինիստրին 70 միլիոն բուբլու փոխառութիւն կնքել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վլորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահան.։
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԻԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրդենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—6½—7½ ժ.։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոն սիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆոն № 1087
Մօլօկայ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 95—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԵԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմիոնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 16—20

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“
№ 4
Աբդիւլ-Համիդը գահամութեան օրերուն մէջ պատկերով և հետևեալ բովանդակութեամբ.
Թիւրգական համերաշխութեան ցնորքը — Տ. Զաւէն
Օսմանեան Սահմանադրութիւնը — Սարգիս Ալիշան
Ապակեդրոնացման սիստեմը և քրիստոնեայ ու մահմեդական ազգաբնակ. — Սաքահէդդին
Թշւառ ժողովուրդ (բանաստեղծ.) — Արփենիկ
Սուլթան Համիդի գիւանագիտական խաղերը — Գեսօ Միքայեանի
Արևելեան հարցի կրած էվօլիւցիան Բերլինի կոնգրեսից ի վեր (1875 1906) — Ռ. Պիտոն
Արմատախիլները — Ց. Տ. Թ.
Գծեր օսմանեան նորագոյն պատմութիւնից և Արզրուլ-Համիդը — Ա. Գիւրջեան
Մամուլի շուրջը
Անգլիան Եգիպտոսի մէջ — Ալիս
Թղթակցութիւններ
I Նամակ Էրզրումից
Կուլտուրական ձեռնարկներ
Լուրեր
Յայտարարութիւններ
Լոյս տեսաւ
Գ. ԻԻՐԵՎԻՉԻ
փոխադրած
Ա. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
Թուաբանական օրինակներ եւ խնդիրներ
Գ. տարին
ԳԻՆՆ է 25 ԿՈՊԵՆ
(Խնդիրները դասաւորված են տեսակներով)
Մամուլի տակ է
Հանրաստ երկրաչափութիւն
Պատրաստ է տպագրութեան համար
Թուաբանական օրինակներ եւ խնդիրների ժողովածու
(Կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոնները)
Դիմել Թիֆլիսի գրախանութներին կամ Тифлисъ М. Самуэляну.
(ղ. ե.) օ. մ. 1—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեմինսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 16—100

ԹԻՖԼԻՍԻ ԹՈՂԼՈՎԱՐԱՆ
Հոգեբշաթի, յունվարի 31-ին
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Սկիզբն է երեկոյեան 10 ժամին.
Դիմակներով պարտաւորեցուցիչ է լինել մինչև վերջը։
Զգեստի ձևը. զինուորականները սովորական զգեստով, քաղաքացիները սև սիւրտուկով, տեղացիները ազգային զգեստներով։ Տոմսակները գանվում են ժողովարանի գրասենեակում։
(Կ. Ա. Չ.) 1—3

ՕՏԱՐ լեզուների վարժուհիների մի խումբ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է բոլոր միջնակարգ դպրոցների քննութիւնների համար գերմաներէն և ֆրանսերէն լեզուներից։ Պարապմունքները խմբովին են և առանձին, կազմվում են երեկոյան խմբեր ծառայող անձերի համար։ Պայմանները հանրամատչելի են։ Դրվել օր. Վէյսի մօտ ամեն օր 12—2 ժ. և երեկ. 4-7 ժամը, Պուշկինսկի փող. № 3, III հարկ, վարժուհիների ընկերութիւն։
1—1

ԽՈՏ
2000 պուդ ծախվում է։ Արսենալի սար, Արարատեան սկիզբ պահեստաւորի. հարցնել կոմանդայի կառավարչին։
օր. ժ. 2—3

ԲԺԻՇԿ
Ա. Մ ի ի թ ա ր ե ա ն ց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններին։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Օլօլակ, անկիւն Բէչնուեան և Պասկեվիչի փողոցներ., № 33/15։
(ա. օ.) 99—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնատէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
58—100

„Գուտտեմբերգ“
գրատպատառնոցում վաճառվում են
1) Լևոն Սարգսեանի, «Ժողովրդի կրթութիւնը մեզանում», 1892 թ., գինն է 20 կոպ.։
2) Լևոն Սարգսեանի, «Հին ցաւ» (հրապարակական խոսքեր), 1900 թ., գինն է 30 կոպէկ։
3) Լևոն Սարգսեանի, «Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», 1904 թ., գինն է 20 կոպէկ։
4) Լևոն Սարգսեանի և Կ. Կուսիկեանի, «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ, հայերէն-ռուսերէն բառգրքով, գինն է 75 կոպէկ։
5) Սարգիս Սարգսեանի, «Լեզուաբանական հետազօտութիւն Ագուլեցոց բարբառի մասին», 2 բուբլի։
6) Բժ. Գարեգին Սարգսեանի, «Վնասակար և օգտակար միկրօբներ», գինն է 20 կ.։
7) Առանձարի, «Վշտի ծիծաղը», գինն է 70 կ.։
8) Ս. Դանիէլբէգեան, «Կանանց հարցը», գինն է 70 կոպ.։
9) Զ. Մօրիէր, «Հաջի Բաբայի արկածները», 2 հատոր, գինն է 3 ր. 50 կոպ.։
Նոյն տեղ ընդունվում է «Մուրճ» ամսագրի 1907 թ. բաժանորդագրութիւնը։
9—10

ՄԻ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ
քաղաքային ուսումնարանը աւարտած, ցանկանում է մի որևէ
ՊԱՇՏՕՆ
Հասցէն՝ Баку, 2-е почтовое отдѣленіе, чиновнику Ванціянцу
(ու. կ. չ.) 2—6

Մի ինտելիգենտ հայուհի ցանկանում է մտնել հայ ընտանիք—երեխաների մօտ ոչ փոքր հինգ տարեկանից, համաձայն է գնալ և ուրիշ քաղաք. ցանկացողները թէ նամակով և թէ անձամբ կարող են դիմել Վլադիմիրսկայա փողոց, տուն № 18. վերին յարկ, առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը։
(Ե. Հ. Կ.) 3—5

ԿՈՉ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ
Թիֆլիսի Հայուհեաց Որբանոցամ Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է և գիտութիւն յարգելի հայ հասարակութեան, որ փետրվար—մարտ ամիսների ընթացքում բանալու է Թիֆլիսում Որբանոց։
Ուստի խոտարհաբար խնդրում է ամէն մի հայի, իր ոյժերի համեմատ նպաստել, ով ինչով կարող է, թէ տան կահկարասիքով, (օր. մահճակալ, պահարան և այլն) թէ խոհանոցի ամանեղէններով և թէ հագուստեղէնի կտորներով, որով չափով կը դիւրացնեն և կը թեթևացնեն որբանոցի սկզբնական անհրաժեշտ ծախսերը։ Վարչութիւնս շնորհակալութեամբ կընդունէ իւրաքանչիւր հայի նպաստ։
Նուէրներ ընդունվում են ամեն օր առ. ժ. 10—12 ը հետևեալ հասցէով. Միխայլովսկի պր. տ. № 65. Թեոդորիա Այվազեանի, տիկին Այվազեանին և Պասկիչ փ. տ. № 13, տիկին Աստղանեանցին։ Նուէրները բերողը կը ստանայ ստացական. բացի այդ՝ լրագրներումն էլ առանձին հաշիւ կը տրվի։
2—8

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՐՈՒՆԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճռով կամաւոր ուղղագրութիւն (стеографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, 1907 թ. պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատստեստաներ։
Դրանից անկախ, բացված է ֆիզ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և բուսաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н.В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (Հ.Կ. Ե.) 20—20

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար
և որպէս բրոշկա կանանց սեռի համար
Առանց կանխավճարի չէ ուղարկվում
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24 В. Варданяну.
Գինն է ոսկուց 18 ռուբ. „ԱՐԾԱԹ 3“ ճանապարհածախսով
Գինն է ոսկուց 15 ռուբ. „ԱՐԾԱԹԻՑ 3“ ճանապարհածախսով
(Կ. Ե. ու. 1—10

Одоль
лучшее для зубовъ.
(յ. 28, փ. 28, 1—2

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул. № 5